

St. Eph. № 253.

St. Petersburg № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՐԱՐԾՐՈՒՆԻ

Մերն կողմից էլ հրամայած է խոյն պար-
սից հիւպատոսին՝ զնաւ բնակիլ Սալմաստ (Սա-
մանեան շահպանադար (հիւպատոս) այժմ ապ-
րում է Սալմաստի Հին թաղաքում և նորընտիր
սէրփէթեատի հետ միացած՝ ամեն չաբիքներ կը
սիրվիէ Քաղաքաւտ հայերի զկէտին։ Մի կողմից էլ
մի հարուստ էր նախկին սէրփէթատ Միրզա-
Հիւսէյն-խանի պաշտօնականութեւրը, որ չալա-
ղանց լաւ էր վարում հայերի հետ, ինչպէս ինքն
վանում պարսկական հիւպատոս եղած ժամանակն
զլ ցոյց տուած էր իր այս լարեհայեցողութիւն
զկէսի հայերը, իսկ նոր սէրփէթատը իր չա-
ղաաւորութիւնները ցոյց տուէ է Ուրմիում,
զիտն այնտեղ պաշտօն ունեցած ժամանակ։ Սա-
լմաստի հայ ու թուրք հայաբաղկովիւնը զինած
էր առաջնորդական տեղապահին, որ գիտած ա-
նէ Ալիբ-նիզամին և նոր սէրփէթատին հրաժա-

հուլիս Եր կոպիտա Վերոյիչեալ վեց ներկայացումները տրվեցան, փոքրիկ բացառութեամբ, հասարակ ժողովրդի համար և կատկած չը կայ որ ունեցան իրանց օգուտը:

Պիեսաների ընտրութիւնը, պէտք է խօստովանած, որ բաւական աջող էր թէ նորութեամբ և թէ գեղարուեստական արժանաւորութիւններով. բայց անմահ Պարոնեանի պիէսաների կողքին դնել անհամ, ձգձգված «Բարեգործութեան դիմակի տակ» պիէսան, դա մեղ համար քիչ անհասկանալի էր: Լիւիս Տէր-Ղրիգորեան իր չինծու ու կեղծ, գողացած ու փչացրած տիպերով հասկացող հանդիսատեսի զայրոյթը չարժեց:

Առանձնապէս արժէ կանգ առնել «Ղարաբաղի աստղադէտը» պիէսի վրա, այդ աջող ներկայացումը տրվեց ի նպատակ ալ Ստեփանեանի. թէ ինքը բնէֆիցիանաւ—Մէլիք-Քէլարի և թէ պ. Անդրանիկը՝ Աստղադէտի գերբնում գեղեցիկ և չնորձալի էին:

Բայցի գերասան հիւրերից ներկայացումներին մասնակցեցին մի շարք ճին ու նոր սերունդներ և մեզ մօտ գերասանի անուն վայելող Մ. Չարչօղլեան: Եթէ ի նկատի չառնենք վերջինիս ամեն տեսակ գերբնում և իր ահաւոր հասակն ու կերպարանը, որ բեմից սարսափ էր աղբում նայողի վրա, կը տեսնենք, որ նա շատ քիչ էր յետ մնում միւս գերասաններից և նրա Արեւոյում աղան ու Ջօշուղը կարելի էր տեսնել առանց ձանձրութեան: Սիրողներից մեզ վրա տպաւորութիւն թողեց միայն պ. Գ. Ստեփանեան, Ալբան-Բալասի պիէսայում կատարած մի փոքրիկ դերով. իսկ միւս թատերասէրների սեփական օգուտները ստիպում են մեզ իրանց վերաբերութեամբ լռութիւն պահել:

Այսպէս վերջացաւ պ. Ստեփանեանի ներկայացումները, տալով նրան բարոյական վարձատրութեան հետ նաև մի զգալի զբաղական վնաս:

Պ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

«Մշակի» ներկայ համարում տպված հեռագիրների մէջ մեր ընթերցողները կը գտնեն լուր թիւրք-պարսկական սահմանի վրա տեղի ունեցող ընդհարումների մասին: Այս համարում մենք տպում ենք Ուրմիայի մեր թղթակցի նամակը, որ նկարագրում է նոյն զէպերը, սակայն մեր թղթակցից չէ ասում, որ կոխ տեղի է ունեցել հայերի և քրդերի մէջ: Ինչպէս երևում է, պարսից զօրքը միտք ունի պատժել սահմանադիր վրա սարող առաջակ քրդերին և կուռում է միայն այդ նպատակով:

Մեզ հեռագրում են Օրէնդուրդից, որ պրօֆէսոր Անդէաս Արծրունին ճանապարհ ընկաւ Պետերբուրգ՝ ներկայ լինելու զէօլօգիկ ժողովին, որտեղից թիֆլիս կը գալ մօտաւորապէս օգոստոսի վերջերին:

Թիֆլիսի դատաստանական ընդհանրից մէկի

պաշտօնին կարգել տալ: Ամիր-Նիզամ յայտնել էր թէ ինքն էլ է ճանաչում, որ այս սերիէրէստը ինչ հարստադաւ է, սակայն ցարդ նա դեռ իր պաշտօնումն է մնում: Կարծես թէ՝ Ամիր-Նիզամն էլ հետզհետէ փոխում է իր լաւ կարծիքները հայոց վերաբերմամբ և վատ դիտումներ է տածում (թէ և ոմանք կարծիք են յայտնում թէ՝ Ամիր-Նիզամը մի այնպիսի հայասէր է, որ իր կարծիքները ընտել կրնար փոխել, միայն նա յարմարվում է ժամանակին և պարագաներին): սակայն ինչ որ էլ լինի նա (Ամիր-Նիզամ)՝ հրամայած է Սալմաստի սերիէրէստին՝ գլխահարկ հաւաքել Սալմաստի գաղթականներից և այս բան առիթ է տուել կեղերիչ սերիէրէստին կողողալու անաէր և սոված դաղթականներին և մի քանիներից էլ հինգ աղան թիւման հարկ առած է: Խեղճ գաղթական, կորցրած իր տուն, իր սիրելիներ, այժմ մերկ ու ծարաւ, հաղիւ աղաստան գտած է պարսկական հողի վրա և Սալմաստի հիւրասէր հայրենակիցների փշրանքներից կերակրվում է, և չեն թողուր զէթ մի վայրկեան իր վիշտ սգալու: Ինչ անէ, հրտեղից վճարէ: Այս առթիւ առաջնորդական տեղապահ ներկայացաւ Ամիր-Նիզամին և յայտնեց թէ՝ ըստ բարեխնամ

մօտ այժմ գտնվում է մի գրականական գործ: Մեղադրում է Նոր-Նախիջևանի մեր աշխատակից, երգուեստ հաւատարմատար Գրիգոր Չարխուշեան, որ «Մշակի» ներկայ տարվա № 28-ի մէջ մի թղթակցութիւն էր տպել Նիկոլայ Աճէմեանցի կտակալատարների գործունէութեան մասին: Այդ կտակալատարները՝ Պետր Գէշէյիւի և Սերաֆիմ Նորստօֆօրովի Արուսիւնով զատ են բացել ալ. Չարխուշեանի դէմ, մեղադրելով նրան զրպարտութեան մէջ: Թիֆլիսից գործը ուղարկված էր Նոր-Նախիջևան, որպէս զի երկու կողմերին հաշտութիւն առաջարկվել, բայց այժմ նորից վերադարձված է, որովհետև ոչ ոք հաշտութեան հրաւերը չէ ընդունել:

Մօսկվայի համալսարանի պրօֆէսոր Ա. Տիլսոմիրով, կատարելով մի փոքրիկ ճանապարհորդութիւն Անդրկովկասի չերամապահական տեղերում, վերադարձաւ Մօսկվա պատրաստելու ճանապարհորդութեան հաշիւը: Տիլսոմիրով մանրամասն ուսումնասիրեց Թիֆլիսի չերամապահական կայարանի գործունէութիւնը և մտադիր է առաջարկել միջոցներ այդ գործունէութիւնը տեւել արդիւնաւէտ դարձնելու համար: Ծանօթանալով գործնական չերամապահների հետ, նա համոզվել է, որ Անդրկովկասի չերամապահութեան զարգացման ամենահիմնական պահանջները մէկն է առողջ ցելիւլար սերմ պատրաստելու գործը կազմակերպել:

Նահանգապետները շատ անգամ հրատարակում են նահանգի ազգաբնակչութեան կամ պաշտօնեաների համար պարտաւորական կանոններ կամ չրջաբերականներ: Ներքին գործերի մի-նիստրութիւնը աչքի անցկացնելով միշտ այժմ հրատարակված այդ տեսակ կարգադրութիւնները, գտել է հարկերից աւելի զէպը, երբ այդ չրջաբերականները անկանոն են եղել կազմված: Այդ պատճառով մինիստրութիւնը այժմ մշակել է նահանգապետների համար յատուկ հրահանգ, որով պէտք է նրանք զեկալարվեն ապագայում պարտաւորեցուցիչ չրջաբերականներ հրատարակելու միջոցին:

Մեզ հաղորդում են, որ յայտնի զինուորական—զորոց գեներալ մայոր Պոստո Ներկայ տարվա մարտ ամիսը ձեռնարկել է հանդուցեալ դե-նիբալ-աղիւտանտ Յովհաննէս Լազարեւի մանրամասն կէսն սագրութեան, որը պատրաստ կը լինի մօտաւորապէս սեպտեմբեր ամսին:

«Петербург. Вѣд.» լրագիրը խօսելով վիճակագրութեան մասին Կովկասում, այն միտքն է յայտնում, որ Ռուսաստանի անկիւնում ոչ մի վիճակագրութիւն այնքան անհրաժեշտ չէ, ինչպէս Կովկասում և սակայն ոչ մի տեղ այդ գործը այնքան անբաւարար չէ դրված, ինչպէս Կովկասում: Կովկասում ոչ միայն չը կայ զինուորական վիճակագրութիւն, այլ և նրա գործնական կողմը—հասարակ վիճակագրական տեղե-

հրամանի վեհախորհուրդ, դաղթականներ իրաւունք ունին հարկ չը վճարելու: մինչև հիմա տարիս ժողովրդի մէջ խօսվում է, որպէս թէ Ամիր-Նիզամ ստան վերաբերվելուց յետոյ, առած է եղեր թէ՝ «եթէ գաղթականներ չեն կարող հարկ վճարել, թող հեռանան մեր հողերը, նրանք փորձանք եկան մեր գլխին, թող Ռուսաստան գնան»: Այս առումն, որպէս թէ իր չուրջ գտնվողներին պարսկերէն լեզուով առած է եղել. «Հայերն էլ մի փորձանք են մեր գլխին»: Եթէ այդ ստանդներ իրողութիւն են, միայն վայրկեանական տղաւորութեան արդիւնք պէտք է համարել: Նոյնպէս Ամիր-Նիզամ հրամայած է մի և նոյն սերիէրէստին, որ մի որ և է հայի մօտ զէնք գտնվելու պէս գրաւել: Այդ հրաման առիթ է տուել մի քանի հայ ճամբորդների զէնքերի գրաւման պարսիկների կողմից: Այս պատճառով հայ ճանապարհորդներ ստիպված են առանց զէնքի ճանապարհորդել, որ չափազանց դժուար է Պարսկաստանի համար, և այս բանը պատճառ է դարձել մի քանի սպանութեանց և կողողութեան, ինչպէս Սալմաստում, վարդան և Սալա գիւղերի մէջտեղ կատարված սպանութիւնը, Սալմաստի ճանապարհում, Տիգրիսալի գիւղի մօտ մի հայ երիտա-

կութիւններ հաւաքելը ամենամահադատեցիչ վիճակի մէջ է գտնվում:

Գօրու գաւառի ԱՍԱԼԻՔԱՍԻ գիւղից հայր-դում են, մեղ որ կիրակի, յուլիսի 27-ին, տիկին Ջաբել և Պարոն-Սարգսեան տունն մի ներկայացում բաղկացած հայերէն և վրացերէն պիէս-ներից: Հայերէն ներկայացրին «Պատաներուն խրատ» պիէսը: Ասում են, որ ներկայացման նպատակը բարեգործական է:

ԳՕՐԻՍԻՑ մեղ գրում են. «Լուսմ ենք, որ Գօրիսից մինչև Ղաթարի պղնձանքերը պօստպին ճանապարհ պէտք է բացվի: Այդ առիթով մի քանի շաբաթ առաջ գնացել էր հանքերը Շուշու պօստային վարչութեան ղեկավարը՝ համաձայնութիւն կայացնելու: Ասում են, որ պօստային բաժինը չուտով կը բացվի և երթեկեւեկները առ այժմ ձիով կը լինի: Այդ մտադրութիւնը վաղուց է և յոյս կայ, որ ներկայումս իրականանայ: Այդ լուրը մեծ ուրախութիւն է պատճառել մանուսկրապէս հանքատէրերին և ընդհանրապէս գիւղական ժողովրդին: Ասում ենք նաև, որ լեռնային ղեկավար վարչութիւնը հրամանագրել է հանքատէրերին, որ իւրաքանչիւր հանքատէր մի ֆելդչեր վարձի: Յանկալի է, որ բոլոր հանքատէրերը համաձայնվեն և փոխանակ առանձին-առանձին ֆելդչեր պահելու, կամ մի հիւանդանոց բաց անեն հրաւիրելով բժիշկ և ֆելդչեր կամ, հակառակ դէպքում, մի հուսա-ֆելդչեր վարձեն, որ մեր կարծիքով բաւական կը լինի հանքերի համար»: —

ԲԱՆԱՆՑ գիւղից մեղ գրում են. «Նորբերս այստեղ, տեղացի ինտելիգենտ երիտասարդների նախաձեռնութեամբ ու մասնակցութեամբ, մի բացօդային ներկայացումն կայացաւ: Գիւղի հրապարակի վրա, որի ծայրում չինած էր բեմը, Այդ երկրորդ ներկայացումն էր Բանանց գիւղում, առաջինը կայացել էր անցեալ ամսուր: Այս անգամ անանայմատ մեծ բաղմունք էր հաւաքվել ներկայացման թէ Բանանցից և թէ նրա շրջակայ գիւղերից: Գիւղի հրապարակի վրա, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չը կար, հարեան տները կտուրներն անգամ ծածկված էին հանդիսականներով: Խաղում էին Ս. Ա.—հանի «Կապ բուրդը» գրութիւնը մի քանի տեսարաններ, որոնք պատկերացնում էին գիւղացիների առաջ նրանց առօրեայ կեանքը, նրանց առաջ անցնում էին հարստաւարդներն ու հարստաւարվածները, ճնշողներն ու ճնշվածները, զգալուն ու նաչարք, խեղճը, անօգնականն ու իրաւադուրը: Գիւղականները մեծ աշխոյժով կատարեցին իրանց դերերը: Նրանցից առանձնապէս աչքի էին ընկնում իրանց բնական և չնորձալի խաղով՝ պ. պ. Մ. Գանիէլեան և Գ. Տէր-Միքայէլեան: Ժողովուրդը դո՛հ և ուրախ սրտով ցրվեց: —

ԳՕՐԻՍԻՑ մեղ գրում են. «Վեհախորհուրդ վարչ-դիւսի Տաթև գալու առիթով պատրաստու-

սարդի սպանվելը, Տիգրաւ գաւառի Աղաղան գիւղացիների և ուրիշ 17 հոգի զարադաղդի-ների կողողալովը, երէկ էլ Ուրմիայի ստացված մի հեռագիր կը յայտնէ, թէ այնտեղ մի վարդապետ սպանված է: Մանրամասնութիւնը կը պահւին. կան և ուրիշ շատ զէպեր, որոնց մանրամասն յիշելը երկար կը լինէր:

Հայր Սարաճեան, յունիս 22-ին մեկնեցաւ Թաւրիզից զէպի Ղարադաղ:

II

Ուրմիա, յուլիսի 14-ին
Գարձեալ զինուորական շարքում կայ այս օրերս և այս անգամ արշաւանքը թիւրք-պարսկական սահմանագլխի ճարա բերդի չուրջն է լինելու, ուր ամրացած է Շիկալ Մէհմէդ-աղան իր ամրակայանցով: Այդ յանդուգն առաջակը քիչ առաջ համարձակվել էր օրը ցերեկով Գիւլիմանի վրա յարձակում գործել, որը բաւական աչքի ընկնող քաղաք է և կենտրոն Սալմաստի, իսկ նրա ամրակը գիւղի ցերեկ հանդիստ չեն տալիս շրջակայ գիւղերի անդէն և անպաշտպան բնակիչներին, կողողալու, սպանում են նրանց անդադար: Վերջապէս, ինչպէս երևում է, զը-րանց օրհասական ժամը եկել հասել է արդէն,

թիւններ էին տեսել Տաթևի վանքում, սակայն իզուր, որովհետեւ գալու լուրը անհիմն գուրս եկաւ: Վանքի զանգակատան չինութեան գործը չարանակվում է և յոյս կայ, որ մօտ ժամանակ-ներս աւարտվի: —

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ջէվ ԱԴ-ՓԱՇԱՅԻ ՄԻՍՍՈՒՆ

Ջէվադ-փաշայի միտիայի առիթով «Times» լրագրի կանչի թղթակցից ասում է.

«Չը նայելով որ Բ. Գուսը պաշտօնապէս հաւատացնում է, թէ Ջէվադ-փաշան գնում է Կրե-տէ փոխարինելու Տէվֆիկ-փաշային և ստանձնելու Կրետէ կղզու թիւրքաց զօրքերի հրամանատարի պաշտօնը, ամենքը հաւատացած են, որ նրան յանձնված է քաղաքական միսիա: Այդ կարծիքը այժմ փաստերով ապացուցվում է, որովհետեւ Ջէվադ-փաշայի նման բարձրաստիճան անձն չէր կարող մի համեմատաբար աննշան զօրաբանի հրամանատար նշանակվել: Առանձին նշանակութիւն չը տալով այն բանին, որ Ջէվադ-փաշան պահանջ էր դնում թէ նախ ծովապետները և հիւպատոսները պէտք է իրան այցելութեան գան, չէ կարելի սակայն, Ջէվադ-փաշայի իսկական միսիան որոշելու համար, բնորոշ չը համարել այն փաստը, որ նա դիմեց Կանչի եպիսկոպոսին և հարցրեց, թէ ինչպէս ինքն կարող է բանակցութիւններ սկսել ապըստամբների հետ: Միւս կողմից, Ջէվադ-փաշան կանչեց իր մօտ կրետացի մի աղեկցիկ անձն և յորդորում էր նրան իր հեղինակութիւնը գործ դնել քրիստոնեաներին մահմաականների հետ հաշտեցնելու համար և այդպիսով հեշտացնել վերջինների վերադարձը իրանց բնակարանները: Երբ կրետացին հարցրեց, թէ արդեօք նրան յանձնարարված է քաղաքական մի այդպիսի միսիա, Ջէվադ պատասխանեց. «Ես ուղարկված եմ այստեղ, որպէս զօրքի հրամատար, բայց յիմարութիւն կը լինի երեսկային, որ միայն զբաղվի է սահմանափակվում իմ պաշտօնը: Ես պէտք է գործեմ որպէս միջնորդ ծովապետների մէջ, որոնք ոչինչ հասկացողութիւն չունեն կղզու մասին, և կրետացիների մէջ, որոնց ես լուս եմ ճանաչում: —

Ի միջի այլոց, Ջէվադ-փաշան յայտնեց, թէ Բ. Գուսը ընդունել է ինքնավարութիւնը, բայց չէ յայտարարել այն պատճառով, որ կրետական հարցը չէր կարող յունական հարցից անջատ լուծում ստանալ: Սակայն, Ջէվադ-փաշայի խօսքով, Կրետան ինքնավարութիւն ստանալուց յետոյ էլ, թիւրքաց զօրքերը չեն դուրս գալ այն տեղից: Դա անհրաժեշտ է, —ասեց նա,—որովհետեւ նոյն կարող էր երաշխաւորել 110.000 մահմաականների ապահովութիւնը կղզու վրա: Միթէ քրիստոնեաները չէին աշխատի ջնջել նը-րանց:—Բայց, ձեռք գերազանցութիւն,—պս-տասխանեց Ջէվադի խօսակցից,—միթէ այժմեան ապստամբութիւնը ուղղված է կրետացի մահմա-ականների, և ոչ թէ թիւրքաց զեղծունիների և

որովհետեւ Ատրպատականի ընդհանուր նահանգապետ Ամիր-Նիզամը որոշել է այդ առաջակ-ների որը հիւքից քանդել և արդէն 5 վաշտ (ֆէվջ) զօրք, հրամանատարութեամբ Ջաֆֆէրը Սալթանայի, բանակ է դրած Գէօնէ-Շէնրի վերս և մի քանի պատերազմական գործողութիւններ կատարված են այս օրերս չիկացիների և պարսից զօրքի մէջ յայտնված թիւրքական առաջին-ների կողմն և և սարեազները յետ են մղվել մեծ կորուստով: Այդ ժամանակ թիւրքաթաճիզ զօրքը ուժեղացել է քրդերին, որոնք, ստանց որ և է կորուստի, քաշվել են ձարայի բերդը, ուր նրանք պաշարման սիւնի ենթարկվել: Խօյի և Ուրմիայի ֆէվջներն էլ հրաման ստացան իսկայն և եթ զինւ պատերազմի դաշտը. իսկ Մէհմէդ-Աղայի որդի Ջաֆարը փորձել է 200 հոգով անցնել Թիւրքիս, սակայն սահմանադաճ թիւրք զինուորներից կրկին յետ է մղվել: Լավում է, որ այժմ ամբողջ թիւրք-պարսկական սահմանագլխի քրդերը չարժան մէջ են և մի մեծ ընդհարում ու վճռական պատերազմ սպասելի է մօտ ժա-

Արգոս

Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.